# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ԱՆ ՀՄԱԱՊՁԲ-2024/80/1

ք. Երևան «23» X 2025թ.

Առողջապահության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ. Գրիգորյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Անդրեասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 104 820 000 (մեկ հարյուր չորս միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:3.3 Գնորդն իրեն մատակարարված

ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **730** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Առողջապահության նախարարություն | «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարության շենք N 3 | Ք. Երևան, Մ. Հերացի 7 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 9000110337 51 | Հ/Հ 1930041595160100 |
| ՀՎՀՀ 02507171 | ՀՎՀՀ 02604367 |
| ---------- | ---------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«23» X 2025թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 33111460/1 | Տոմոգրաֆիկ սարքեր | Համակարգչային տոմոգրաֆիայի սարք: Revolution Maxima Select. GE HealthCare. | Ներկայացվում է Հավելված 1.1-ով | հատ | 104,820,000 | 104,820,000 | 1 | ՀՀ, Արարատի մ, Արարատի ԲԿ | 1 | համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.11.2025թ |

**ԳՆՈՐԴ**
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033751
ՀՎՀՀ 02507171

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
Ք. Երևան, Մ. Հերացի 7
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367

---
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«23» X 2025թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80/1» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մոդելը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագրերը |
| 1 | համակարգչային տոմոգրաֆիայի սարք | Revolution | Revolution Maxima Select | GE HealthCare | ***Համակարգչային տոմոգրաֆ***<br>32/64 շերտանի պարուրային համակարգչային տոմոգրաֆ ընդհանուր և հատուկ կլինիկական հետազոտությունների համար, բժիշկի համար աշխատանքային կայանի, գլխի և անոթների և պերֆուզիոն վերլուծության, անոթաբանական և այլ հետազոտությունների ծրագրերի առկայությամբ<br>***Գենտրի***<br>Փաստացի շերտերի թիվը 360° պտույտի դեպքում 32 բոլոր արագություններով<br>Ալգորիթմով ստացված շերտերի քանակը 64<br>360 աստիճանի պտտման ամենակարճ ժամանակը՝ 0.5 վ<br>Ապերտուրայի բացվածքը՝ 70 սմ տրամագծով<br>Առավելագույն սկանավորման տեսադաշտ (աքսիալ հարթությունում) 50 սմ<br>Լազերային տեղայնացման առկայություն՝ սեղանի վրա հիվանդի ճշգրիտ դիրքավորման համար<br>Գենտրիի թեքվածության չափը՝ +/- 30o<br>***Դետեկտոր***<br>Z առանցքի երկայնքով դետեկտորի շարքերի քանակը՝ 64<br>Z առանցքով դետեկտորի լայնությունը՝ 4սմ<br>Z առանցքով դետեկտորի տվյալների հավաքման անկախ ալիքների քանակը՝ 32<br>Դետեկտորի էլեմենտների ընդհանուր քանակը՝ 54272<br>***Բարձր լարման գեներատոր և ռենտգեն խողովակ***<br>Ռենտգեն խողովակի ջերմակրությունը՝ 7MHU<br>Անոդի հովացման արագությունը՝ 1070 kHU / րոպե<br>Գեներատորի նոմինալ հզորությունը՝ 55 կՎտ<br>Ռենտգեն խողովակի անոդային լարումը՝ 80-140կՎ տիրույթում<br>Խողովակի անոդային հոսանքի միջակայքը՝ 10mA-460mA տիրույթում<br>Գեներատորի հովացման մեթոդը՝ օդային<br>Ռենտգեն խողովակի հովացման մեթոդը՝ օդային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ***Պացիենտի սեղան*** | |
| | | | | | CT սկաները սեղանի մակերևույթը պետք է պատրաստված լինի դիմացկուն և ռադիոթափանցիկ նյութից | |
| | | | | | Սեղանի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 227 կգ | |
| | | | | | Հորիզոնական շարժման տիրույթը 1745 մմ | |
| | | | | | Հորիզոնական սկանավորման տիրույթը 1730 մմ | |
| | | | | | Մաքսիմալ ուղղահայաց շարժման միջակայքը 561 մմ | |
| | | | | | Սեղանի հորզոնական շարժման արագությունը 175 մմ/վրկ | |
| | | | | | Հիվանդի սեղանի կառավարման ոտքի ոտնակի առկայություն | |
| | | | | | Անհրաժեշտ աքսեսուարների հավաքածուի առկայություն՝ գլխատակի հարմարանք, բարձեր, ներքնակ, միջադիրներ | |
| | | | | | ***Սկանավորման և ռեկոնստրուկցիայի պարամետրեր.*** | |
| | | | | | Սկանավորված շերտի նվազագույն հաստությունը՝ 0,625 մմ | |
| | | | | | Պատկերի վերակառուցման մատրից 512 × 512 պիքսել | |
| | | | | | Պատկերի ցուցադրման մատրից 512 × 512, 1024x1024 | |
| | | | | | Սկանավորված շերտի նվազագույն հաստությունը ռեկոնստրուկցիայի ժամանակ՝ 0.625մմ | |
| | | | | | Նվազագույն վերակառուցման դաշտ (առանցքային հարթությունում)՝ 50 մմ | |
| | | | | | Առավելագույն վերակառուցման դաշտ (առանցքային հարթությունում)՝ 500 մմ | |
| | | | | | Շարունակական սկանավորման առավելագույն տևողությունը՝ 120վրկ | |
| | | | | | Պատկերի վերակառուցման արագությունը (512 × 512). 50 պատկեր / վրկ | |
| | | | | | Պիտչի տիրույթը՝ 0,516-1,531 սմ սահմաններում | |
| | | | | | TOPO- ի ուղղությունը՝ առաջ-ետ, ձախից աջից | |
| | | | | | Տոպոգրամմայի առկայություն | |
| | | | | | Աքսիալ սկանավորման առկայություն | |
| | | | | | Պարուրաձև սկանավորուման առկայություն | |
| | | | | | ***Աշխատանքների գործընթացն արագացնելու և ճառագայթման ազդեցությունը նվազեցնելու տեխնոլոգիաներ. (Առկայություն)*** | |
| | | | | | Արտակարգ իրավիճակների սկանավորման արձանագրություն, որը չի պահանջում հիվանդի տվյալների մուտքագրում նախքան հետազոտությունը | |
| | | | | | Խողովակի հոսանքի ավտոմատ հարմարեցումը կտրված հարթության և սկան հարթության մեջ հիվանդի անատոմիական առանձնահատկություններին | |
| | | | | | Դոզայի նկատմամբ զգայուն տարածքների և օրգանների ճառագայթահարման նվազեցման տեխնոլոգիա | |
| | | | | | ***Աշխատանքային կայան*** | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պրոցեսորը պետք է հիմնված լինի 64 բիթ ունեցող բարձր արագությամբ պրոցեսորի վրա, 64 ԳԲ RAM, պատկերային տվյալների արտաքին պահման տեսակ՝ CD / DVD-RW | |
| | | | | | Պատկերի ռեկոնստրուկցիայի արագությունը 50 պատկեր/վրկ | |
| | | | | | 2 գունավոր 1 մեգապիքսել 19" բժշկական մոնիտոր, թողունակությունը 1280×1024 պիքսել | |
| | | | | | DICOM Store- Պատկերներն ուղարկել աշխատանքային կայանի և/կամ արխիվացման համակարգին | |
| | | | | | DICOM 3.0 ինտերֆեյս | |
| | | | | | Աշխատանքային կայանը պետք է կարողանա կազմաձևել բազմակի ձևաչափի պատկերներ DICOM 3.0 տպիչների համար | |
| | | | | | Ավտոմատ նկարահանում | |
| | | | | | Աշխատանքային ցուցակի գործառույթ | |
| | | | | | Ethernet 10/100/1000 աջակցություն | |
| | | | | | ***Հետմշակման աշխատանքային կայան*** | |
| | | | | | Պրոցեսորը պետք է հիմնված լինի 64 բիթ ունեցող բարձր արագությամբ պրոցեսորի վրա, ունենա նաև պատկերի պահպանման կոշտ սկավառակ ոչ պակաս քան 1ՏԲ, 64 ԳԲ RAM, DVD այրիչ, CT սկաների աշխատակայանի ծրագրակազմ, 100M / 1000M փոխանակման սարք, պատկերային տվյալների արտաքին պահման տեսակ՝ CD / DVD-RW | |
| | | | | | 2 գունավոր 1 մեգապիքսել 19" բժշկական մոնիտոր, թողունակությունը 1280×1024 պիքսել և 1 գունավոր 2 մեգապիքսել 24" բժշկական մոնիտոր, թողունակությունը 1920×1200 պիքսել | |
| | | | | | ***Ապարատային և ծրագրային փաթեթներ և կլինիկական ծրագրեր օպերատորական կոնսոլի վրա: (Առկայություն)*** | |
| | | | | | Բազմաշերտ վերակառուցում | |
| | | | | | Կորի հարթ բարեփոխում | |
| | | | | | Ծավալի մատուցում | |
| | | | | | Առավելագույն ինտենսիվության նախագծում | |
| | | | | | Մինիմալ ինտենսիվության նախագծում | |
| | | | | | CT անգիոգրաֆիա | |
| | | | | | Հյուսվածքների հատվածավորում | |
| | | | | | Մեկ կտտոցով ոսկորի պատկերի հեռացում | |
| | | | | | Ավտոմատ կերպով հիվանդի սեղանի հանում | |
| | | | | | Կոնտրաստ նյութի ավտոմատ հետևման տեխնոլոգիա | |
| | | | | | Կապը ավտոմատ միանալու տեխնոլոգիա | |
| | | | | | Բոլուսին հետևելու տեխնոլոգիա | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պարույրի ավտոմատ մեկնարկ | |
| | | | | | Կինոյի ցուցադրություն | |
| | | | | | Մետաղի արտեֆակտների ճնշման տեխնոլոգիա | |
| | | | | | Բոլոր դաշտերով ինտերատիվ վերակառուցում | |
| | | | | | Խողովակի ընթացիկ կարգավորման տեխնոլոգիա | |
| | | | | | Ցածր դոզայով մանկական սկանավորման տեխնոլոգիա | |
| | | | | | Ցածր դոզայով թոքերի սկանավորման տեխնոլոգիա | |
| | | | | | CT անոթների վերլուծություն | |
| | | | | | ***Բժիշկների կայան՝ CT պատկերների եզրմշակման համար (Առկայություն)*** | |
| | | | | | CT պատկերման աջակցություն | |
| | | | | | Պատկերների տպագրության ծրագրային մոդուլ | |
| | | | | | Ինտերֆեյսային համակարգերի ինտեգրում PACS համակարգին՝ համաձայն DICOM արձանագրության | |
| | | | | | Դիտման, չափման և վերլուծության հիմնական գործառույթներ | |
| | | | | | Հիվանդների տվյալների պահպանման բրաուզեր | |
| | | | | | Նույն սերիայի պատկերները «կինո» ռեժիմում դիտելը | |
| | | | | | Արագ դիտում մկնիկի միջոցով | |
| | | | | | Պատկերների դիտում | |
| | | | | | Պատկերների պտտում | |
| | | | | | Պատկերների շրջում | |
| | | | | | Պատկերների մեծացում | |
| | | | | | Պատկերների փոքրացում | |
| | | | | | Նշված ցուցիչների ավելացում | |
| | | | | | Հեռավորության չափում | |
| | | | | | Անկյունի չափում | |
| | | | | | Ծավալի չափում | |
| | | | | | Մակերեսի չափում | |
| | | | | | Միաժամանակ դիտված շարքերի սինխրոնիզացում՝ըստ մասշտաբի, կենտրոնի, պատուհանի լայնության, պայծառության, հակադրության, գույների ներկայացման, ոլորման | |
| | | | | | Սինքրոն շարքի նավիգացիա | |
| | | | | | 3D պատկերացման ինտեգրված գործիքներ | |
| | | | | | Պատկերների սիխրոնիզացումը բազմապլան ներկայացման մեջ ըստ հղման կետի | |
| | | | | | Մեկ էկրանին օբյեկտին ներկայացնելու հնարավորությունը | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Զննումներ VRT, MIP, MPR ցուցադրման ռեժիմներում | |
| | | | | | Ինտերակտիվորեն վերակառուցման տարածքի հաստության փոխոխում | |
| | | | | | Գործիքներ առարկայի, սեղանի, ոսկրային կառուցվածքների մի մասը հեռացնելու համար | |
| | | | | | Առաջադրված հաստության զուգահեռ, ճառագայթային և կոր տիրույթների ստեղծում | |
| | | | | | Անոթային քանակական վերլուծության ծրագիր, ստենոզի պարամետրերի չափում. - լյումենի ներքին տրամագիծը, - լյումենի լայնակի կտրվածքի մակերեսը, - անոթների հատվածների երկարությունը | |
| | | | | | Թոքերի հետազոտության/վերլուծության ամբողջական փաթեթ: | |
| | | | | | ***Հիվանդի հաղորդակցություն.*** | |
| | | | | | Ներքին հազորդակցության համակարգ՝ ներառում է հիվանդի հետ հաղորդակցման համալիր | |
| | | | | | Սեղանն արտակարգ իրավիճակներում կանգնեցման համակարգ | |
| | | | | | Հետազոտման սենյակում բարձրախոսի և ականջակալների ձայնային կարգավորում | |
| | | | | | Բարձրախոսի ձայնի կարգավորում կառավարման սենյակում | |
| | | | | | ***Էլեկտրոսնուցում*** | |
| | | | | | Լարումը 3 ֆազ, 380 Վ ± 10% | |
| | | | | | Հաճախականությունը՝ 50Հց±1Հց | |
| | | | | | Էլեկտրական անվտանգությունը համապատասխանում է IEC-60601 / IS-13450 էլեկտրական անվտանգության ստանդարտներին | |
| | | | | | ***Պարագաներ*** | |
| | | | | | Հավաքածուն ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերն ու պարագաները սարքավորման լիարժեք գործունեության համար և անձնակազմի պաշտպանության համար անհրաժեշտ անվտանգության պարագաներ (օրինակ՝ մալուխներ, տեղադրման նյութեր, մեկուսիչ նյութեր և այլն) | |
| | | | | | մեկ հատ վզի շրջանի ճառագայթային պաշտպանության հագուստ | |
| | | | | | մեկ հատ ամբողջ մարմնի ճառագայթային պաշտպանության հագուստ | |
| | | | | | Անհրաժեշտ որակի ապահովման ֆանտոմների առկայություն՝ CT սկաների պատկերի որակը և կարգաբերումը ստուգելու համար | |
| | | | | | Ֆանտոմի պահիչի առկայություն | |
| | | | | | Ռենտգենյան ճառագայթի պաշտպանիչ ապակու առկայություն՝ համապատասխան չափսի պատին ամրացնելու շրջանակով, ռենտգենյան ճառագայթման առավելագույն լարման պաշտպանությունից՝ 150 ԿՎ, առկա չափը՝ 110 x 90 սմ, տեսանելի լույսի փոխանցելիությունը՝90%, հաստությունը՝8.0 մմ, օդային պղպջակների առկայություն՝ չկա պղպջակ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ինժեկտոր-ներարկիչի առկայություն կոնտրաստային նյութի համար՝ երկու 100/100 մլ սրվակներով, մատակարարվող սարքի հետ աշխատելու հնարավորությամբ - առկայություն, հեռակառավարման վահանակ | |
| | | | | | ***Լրակազմ և պարագաներ*** | |
| | | | | | 24 ամիս երաշխիք ամբողջ համակարգի, այդ թվում ռենտգենյան խողովակի համար | |
| | | | | | Մոնտաժային նյութերի, մալուխների առկայություն անհրաժեշտ համակարգի տեղադրման համար | |
| | | | | | Անխափան սնուցման աղբյուրից (UPS) մինչև համակարգչային տոմոգրաֆի սարքավորում եռաֆազ հոսանքի սնուցման մալուխի առկայություն (մինչև 30 մետր) և այդ մալուխի անցկացման ու մոնտաժման համար բոլոր պարագաների առկայություն (ամրակներ, անջատիչ և այլն), ինչպես նաև այդ մալուխի անցկացման ու մոնտաժման աշխատանքներ | |
| | | | | | Տեղադրում և մեկնարկ | |
| | | | | | 4-օրյա աշխատակազմի ուսուցում տեղում | |
| | | | | | 3 ամիսը մեկ անգամ մասնագետի կողմից համայց սարքավորման ընդհանուր գործունեության ստուգման համար | |
| | | | | | Սարքավորման խափանման դեպքում վերանորոգում 10 օրվա ընթացքում: Ռենտգենյան խողովակի կամ դետեկտորի խափանման դեպքում վերանորոգում 30 օրվա ընթացքում | |
| | | | | | Օգտագործողի ձեռնարկները, տեխնիկական և սպասարկման ձեռնարկները, թղթային և էլեկտրոնային պատճենները, պետք է տրամադրվեն հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն լեզուներով: | |
| | | | | | Սարքավորումը նոր է, չօգտագործված | |
| | | | | | Ապրանքը արտադրված կլինի ոչ ուշ, քան պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամսվա ընթացքում | |
| | | | | | ***Հրահանգներ մրցույթի մասնակիցներին.*** | |
| | | | | | Մրցույթի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը կներկայացնի սարքի տեխնիկական անձնագիրը, որը կհաստատի տեխնիկական բնութագրերը: | |
| | | | | | Մրցույթի արդյունքում պատվիրատուի հետ մատակարարման համաձայնագիր ստորագրած ընկերությունը մշտապես տեղեկատվություն կտրամադրի մատակարարման ընթացքի վերաբերյալ | |
| | | | | | Մրցույթի արդյունքում պատվիրատուի հետ մատակարարման համաձայնագիր ստորագրած ընկերությունը սարքերի՝ ՀՀ ներմուծման օրը կտեղեկացնի պատվիրատուին | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Մրցույթի արդյունքում պատվիրատուի հետ մատակարարման համաձայնագիր ստորագրած ընկերությունը սարքերի արկղերը կբացի բացառապես պատվիրատուի ներկայացուցիչների ներկայությամբ | |
| | | | | | ***Որակի վկայականներ (առկայություն)*** | |
| | | | | | 1. ISO13485 | |
| | | | | | 2. ISO 9001 | |
| | | | | | 3. ISO 14001 | |
| | | | | | 4. ISO 14971 , դեկլարացիա N DOC0283944, Rev:17 | |
| | | | | | 5. CE Mark (Directive 93/42/EEC) | |

**ԳՆՈՐԴ**

Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033751
ՀՎՀՀ 02507171

---

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
Ք. Երևան, Մ. Հերացի 7
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367

---

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«03» 04 20 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33111460/1 | Տոմոգրաֆիկ սարքեր | - | - | - | - | - | - | - | - | - | 104,820,000 | 104,820,000 | 104,820,000 | 104,820,000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033751
ՀՎՀՀ 02507171

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
Ք. Երևան, Մ. Հերացի 7
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367

---
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«  »  20 թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80/1» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20  թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80/1» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Հավելված N 4*
*«  »  20  թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80/1» ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--»  20  թ. կնքված
գնորդի անվանումը  վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի  միջև  «--»  20  թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____  _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)  ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»  20  թ.